

իրեն սեփականեալ կը կարծեր, հիմա կը տեսներ, որ փոքրիկ աղջկան մը մէջտեղ ելնելու՝ կ'ուզէին իրմէ յափշտակել: Եթէ Կամսարականք միայն լինէին խնդրոյն մէջ՝ պատրաստ էր իւր պատասխանը, բայց ժողով մը նախարարաց ի Դուին, ի գլուխ կաթողիկոսն եւ մանաւանդ Թեոդորոս Ռշտունի, որ խօսելէ աւելի գործել գիտէր, վտանգաւոր դրացի, որուն մէկ ձեռքը Բզնունեաց գաւառն ակը եւ միւսը Բաղէշ, այնպէս որ արեւելքի եւ հարաւոյ կողմէն իբրեւ թէ գրկած էր իւր Տարօնս երկիրը, իրեն սրտին միշտ երկիւղ եւ կասկած ազդած էին, իսկ հիմա կը տեսներ Նոյն Թեոդորոս Արծափաց պատերազմի յաղթութեամբ պսակեալ՝ Կամսարական Ներսէհ գործիք առած իւր ձեռքը՝ փոքրիկ աղջկան մը կեղակարծ իրաւունքը կը պահանջէր իրմէ: «Եւ ինչ խօլական եւ անտեղի իրաւունք որ հիմն չունի, կ'ըսէր ինքնիրեն, ո՛վ օրէնք գրած է, որ աղջկունք կարէնան նախարարական կալուած ժառանգել, ո՞ւր կ'երթայ աչս պէս նախարարութեանը նահապետական իրաւունքը: Բայց Յամագասպ տկարամիտ մէկն է, կելնէ յիմարաբար հաւանութեան թուղթ մը կը գրէ փոխանակ բողոքելու, եւ Թեոդորոս կը հասնի իւր դիւական նպատակին Մամիկոնեանք տկարացնելով եւ բաժնելով Պետք է շուտով տեսնեմ այդ տղան, այո, այո մորուեղ տղան, որ չի մեծնար, եւ եթէ ձեռքէն չբռնեմ կ'երթայ, կը գլորի գահավէժէ ի գահավէժ, բարեբախտաբար որ չի նմանիր այդ յանձնապաստան երիտասարդ իշխանազանց, որ վստահ իւրեանց գիտութիւն, ոսմունք ըսած բաներուն, կը խօսի, կը վիճեն, այս տրամաբանութիւն է, այդ փիլիսոփայութիւն է, այն աստուածաբանութիւն է ըսելով, վարդապետի յատուկ ձանձրալի երկարաբանութեամբ: Այլ խրատի կը լսէ եւ կը յարդէ իւր Նահապետին հրամանները»:

Այս մտածութեամբք Մուշեղ բոլորովին մոռցեր էր այդ շիրակացի երիտասարդը եւ արաբացի նժոյգները: Նոյն վայրկենին նամակաւ սուրհանդակ կը հաներ ի ինուն առ Յամագասպ, որ դա շտապաւ, առանց պատասխանելու Կամսարականին: Եւ ինք, երբ քիչ մը հանգստացաւ եւ սկսաւ ցուրտ արիւնով խորհրդածել՝ զոջաց, որ Չաւենի հետ խօսելուն կիրք յայտներ էր, վասնզի ի բնէ խորամանկ եւ քիւսախնդիր մարդ լինելով, շատ քիչ կը հանդիպէր իրեն բարկանալ եւ յայտնել իր սիրտը, ուստի Չաւենն հարցուց, եւ երբ իմացուցին թէ դնացեր իջեր էր քաղաք, խնդրակ հանեց ետեւէն, որ գայ:

Իսկ Չաւեն, որ Մուշեղի զօշաբաղութեան եւ նախատանաց առջեւ զայրոյթը հազիւ կրցեր էր զսպել, եւ մեծ ուրախութեամբ իւր ներկայութենէն հեռացեր, դուրս ելնելուն՝ չորս-չորս ոտք իջաւ սանդուխները, ձիուն վրայ նետուեցտաւ եւ հասաւ քաղաք: Իջեւանին առաջ, ուր թողէր էր իւր երկու թիկնապահները, երբ